

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**ՀՀ Կոտայքի մարզի Արգնի համայնքի ղեկավարը հայտարարում է մրցույթ հետևյալ թափուր պաշտոնները զբաղեցնելու համար**

**1. ՀՀ Կոտայքի մարզի Արգնի համայնքապետարանի աշխատակազմի 2-րդ կարգի մասնագետ (ծածկագիր 3.3-1):**

- իրականացնում է համայնքի սեփականություն համարվող հողամասերի բարելավման աշխատանքներ.
- իրականացնում է վարչական սահմաններում գտնվող հողամասերի ընթացիք հաշվառումը և կազմում է համայնքի հողային հաշվեկշիռը.
- վերահսկողություն է իրականացնում համայնքի վարչական սահմաններում գտնվող հողերի նպատակային օգտագործման , հողօգտագործողների կողմից հողային օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ.

**2. ՀՀ Կոտայքի մարզի Արգնի համայնքապետարանի աշխատակազմի 2-րդ կարգի մասնագետ (ծածկագիր 3.3-2)**

- ապահովում է փաստաթղթա շրջանառությունը,
- մասնակցում է գորակոչի, գորահավաքի ու վարժական հավաքների կազմակերպման աշխատանքներին,
- իրականացնում է պաշտոնի անձնագրով սահմանված այլ գործառույթներ

**Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝**

ա) միջնակարգ կրթություն, առանց աշխատանքային ստաժի,  
բ) «Համայնքային ծառայության մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», «Հանրային ծառայության մասին» , Հայաստանի Հանրապետության օրենքների, աշխատակազմի կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.

գ) տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը.

դ) ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

Մրցույթը կկայանան **05 դեկտեմբերի 2018թ. ժամը 11<sup>00</sup>** Արգնի համայնքապետարանի շենքում (գ. Արգնի):

Դիմող ՀՀ քաղաքացիները և փախստականի կարգավիճակ ունեցող անձինք պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը

դիմում մրցույթային հանձնաժողովի անունով (լրացվում է փաստաթղթեր ներկայացնելիս)

- տվյալ պաշտոն զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների ու աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջներ բավարարումը հավաստող փաստաթղթերի, դիպլոմների, վկայականների, աշխատանքային գրքույկի (վերջինիս բացակայության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել տեղեկանք համապատասխան մարմնից) պատճենները բնօրինակների հետ միասին:

- արական սեռի անձինք նաև զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր գորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը բնօրինակի հետ միասին
- մեկ լուսանկար 3x4 սմ չափի
- անձնագրի պատճենը

Փաստաթղթերը ընդունվում են Արզնիի համայնքապետարանի աշխատակազմում, հեռ. 091 637326 կամ ք. Հրազդան, Կենտրոն վարչական շենք, Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչության ՏԻևՀՄՀ բաժնում, հեռ. 0223 23413, ժամը 10<sup>00</sup>-ից մինչև 15<sup>00</sup>-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Փաստաթղթերի ներկայացման վերջին ժամկետն է **21.11.2018թ.**